ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ»
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՑ

Փոստային հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 26/3,
հեռ.՝ +37410520445, +37410583682, բջջ. հեռ՝ +37495766527,
էլ. փոստի հասցե՝ educate.ctua@gmail.com, hamk@hamk.am

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Իրազեկում եմ, որ «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը (ՀԱՄԿ) 2024 թվականի մայիսի 1-ին Ազատության հրապարակ-Հ.Թումանյան փողոց - Մ.Մաշտոց պողոտա - Ա.Ամիրյան փողոց - Հանրապետության հրապարակ - Վ. Սարգսյան փողոց 26 երթուղով, ժամը 12:00-ից մինչև 15:00-ը, երթ անցկացնելու վերաբերյալ:

Խնդրվում է դիտարկել նաև երթուղու հետևյալ այլընտրանքային տարբերակը՝ Խ.Աբովյան պուրակ (Խ. Աբովյան փողոցին հարող հատված) - Խ. Աբովյան փողոց- Վ. Սարգսյան փողոց 26՝ հատելով Ա. Ամիրյան փողոցը:

Նպատակն է անցկացնել երթ՝ Աշխատանքի օրվան նվիրված:

Երթի ընթացքում օգտագործվելու են՝

1. 1,2x3մ պաստառ (պլակատ) -1 հատ,
2. աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների վերաբերյալ կարգախոսներով պաստառներ (պլակատներ) -20 հատ,
3. կերպար պաստառներ (պլակատներ) -5 հատ,

4. արհմիութենական դրոշներ,
5. ձայնափող-2 հատ,
6. մանկական սուլիչներ,
7. երթը սահմանազատող ժապավեն:

Մասնակիցների սպասվող թիվը 500-1000 հոգի: Կարգադրիչների նախատեսվող թիվը 20 հոգի:

Կից՝ 3 թերթ:

«12» ապրիլի 2024թ.

Signed by MANASERYAN ELEN 7714810378
Date: 12.04.2024 20:27:14 +04:00
Հավաստված է ԷԿԵԼՈ-ի կողմից